



Պատասխանատու
Յովհաննէս Փիլիճեան

ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՆՆԵՐ

Նամակըն ուղղելի էն
առ. Ղ. Գ. Պալղազարեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՒՆՆԵՐ ԵՄԲԱԹ 10 ՆՈՅԵՄԲԵՐ 1879

ԹԻՒ 1131

ԱԶԳԱՅԻՆ

Հոկտեմբեր 28 կիրակի օր Հակահասունեան ազգայիններէն արժաւոր Հայր Մաղաքիա Օրմանեան և այլ խել մը անձինք, Հայաստանեայց Եկեղեցւոյ զիրկը վերադառնալու գովելի նպատակաւ, ի պատրիարքարան կը իման, և կը ներկայանան ամենա. Ս. Ներսէս Պատրիարքին, ուր ներկայ կը գտնուին եղբր նաև ոմանք եպիսկոպոստոնք և երեսփոխանական ժողովոյ ատենապետ Ասլանեան վսեմա. Ստեփան բաշա:

Նախ Օրմանեան արժաւոր Հայր Մաղաքիա վարդապետ ուղերձ մը կը կարդայ և ամենա. Պատրիարք Հայրը մեծաւ սիրով ընդունուելին յայտնելով, ի պատասխանի ճառախօսութիւն մը կընէ:

Ետոյ վսեմափայլ Ստեփան բաշա, Եսայեան թովմաս և Եռսուֆեան Տիգրան էֆէնտինները սոյն հանդիսին նկատմամբ ուղերձներ կը կարդան, և ապա ի Մայր Եկեղեցի իջնելով խուռն բազմութեան մէջ Պատրիարք Հայրը ծայրագոյն վարդապետութեան աստիճան կուսայ արժաւորաբար Օրմանեան վարդապետի:

Ահաւասիկ Հայաստանեայց Եկեղեցւոյ զիրկը վերադարձող մեծաւ անձանց անունները:

- Ազնաւորեան Օբերգրէ էֆէնտի
- Ազնաւորեան Գէորգ
- Ազնաւորեան Ս. Յովսէփ
- Պիշանեան Հեթում
- Եսայեան Պօղոս
- Յովհաննէս
- Թովմաս
- Մանուէլ
- Թովմասեան Յակոբ
- Թուրքեան Երուանդ
- Խուրամեան Պօղոս
- Յովհաննէս
- Գրիգոր
- Անան
- Կէօշեան Կոմիտաս
- Յովհաննէս

- Կէօշեան Մկրտիչ
- Մինասեան Մինաս
- Մինասեան Պետրոս
- Մինասեան Գրիգոր
- Շահինեան Յովհաննէս
- Շիշմանեան Պօղոս
- Շնորհքեան Յովհաննէս
- Շնորհքեան Մանուէլ
- Շնորհքեան Գէորգ
- Շնորհքեան Բ. Յովհաննէս
- Սեւեան տօքթօր Գաբրիէլ Պէյ
- Սեւեան Սրապիմ
- Վասիլեան Յովսէփ
- Գըլճեան Յովսէփ
- Օղուլուգեան Մինաս
- Օրմանեան Անտօն
- Օրմանեան տօքթօր Վիլչէն
- Օրմանեան տօքթօր Կոմիտաս

Կրիտիկութեամբ նաև սոյն հանդիսին մէջ արտասանուած ճառախօսութիւնները մասն առ մասն հրատարակել ի գիտութիւն հեռարնակ ազգայնաց մերոց:

ԽՕՄ Ս. ՊԱՏՐԻԱՐԻ ՀՕՐ

Անցեալ Զատիկս երբ պատուեցիք զիս Ձեր այցելութեամբ մեր խոնարհ բնակարանին մէջ, և Ձեր սրտարուխ խօսքերով Ձեր առ Ազգն և բուն Եկեղեցին ջերմ սէր կը յայտնէիք իբրև պատգամաւոր ի դիմաց բազում եղբարց, ես որ արդէն թէ Ձեզ և թէ Ձեզի հետ այն օրը չընկերացողներէն չատերը կը ճանչնայի և կը ճանչնամ և որոց և Ձեր հոգւոյն թափանցած էի և եմ որ թէ դուք և թէ անոնք մէկ մէկ թանկագին և պատուական և լուսաւոր ջանքերն էք Հայոց ազգին, և Հայոց գրախտին գեղեցիկ և պողատու ծառերն որ ոչ ձեր կամաւ այլ ժամանակին բերմամբ մեր գրացոյն սրահը և պարտէզը փոխադրուած լուսաւորելով կը վարդաբերէք, համամիտ համաձայն և համասիրտ ըլլալով ձեր բուն եղբարց հետ, և ձեզմէ և անոնցմէ չատերը հայութեամբ կը վարձէին և կը

պարծին, ազգին համար կաշխատէին և կաշխատին, այսօր ձեր հարց և հաւուց տունը և պարտէզը կուգայք զարդարել և փառաւորել, ոչ թէ մեր թելագորութեամբ կամ հրապուրանքը այլ ձեր ընդարդոյս ազգասիրութեամբ և փորձու ծաղկեալ հանճարով, թերևս մեծ փառաւոր և ոսկեզօծեալ էր գրացոյն պալատը և ընդարձակագոյն պարտէզը, ուր կը գտնուէիք, և թերևս անպատճառ, անզարդ և ոչ այնչափ ընդարձակակամաւալ է այս տուն ու պարտէզ ուր եկայք, բայց գիտէք և գիտցաք որ ձերն է այս տունը, և պարտէզը, հոն հիւր էիք, հոս բնիկ էք, այն ձեր տունը չէր, այս է ձեր խրճիթը, դուք Հայաստանի գրախտին գեղեցիկ ծաղիկնք և փափուկ ծառեր, ընդ հեռաւոր երկնաւ ընդ օտար աստեղօք, ձեզ անընտել կլիմայի տակ, արուեստին խիստ օրինօք նեղ ու անձուկ թաղարներու մէջ հազիւ արևոյն փոքր ճառագայթն ընդունելով կաճէիք, արդարև զի ձեր սերմը օրհնեալ էր և ձեր արմատն օրհնուած Հայաստանեայց օրհնեալ Եկեղեցիէն զի գաղթել էիք Բիւրակեան Աստուածատունկ գրախտէն որ ազենաբուղիս քառավտակ գետօք կ'ոռոզի եթէ այն արուեստակեալ ձմրոցին մէջ աճեցեալք. հիմա որ բուն ձեր հայրենի պարտէզը կուգայք. ես վստահ եմ որ թաղէի և Բարթոլոմէոսի Գրիգորի Լուսաւորչի, Ներսիսեանց Վարդանանց ներշնչող հոգին գերաբուն զձեզ եթէ արմարիւեան շնորհօք պիտի աճեցնէ և բեղմնաւորէ ի փառս Հայաստան աշխարհի և Եկեղեցւոյ:

Հիմա որ ձեր հայրենի տան սեմերէն ներս ոտք կ'ոխեցիք կ'ընդգրեմ շրջագայեցէք ամեն կողմ կ'տեսէք թէ ինչպէս բնաւին չէ փոխուած, ձեր բուն բազմաթիւ եղբարցներն որ այս տան մէջ մնացին, թէ յաշողութեան մէջ և թէ ձախորդութեան մէջ, ջանացին կանգուն պահել այս տունը, փշեցին հողմունք, փրթան անհազին փոթորիկք, յարձակեցան ամենի ալիք և որ ամենէն աւելի դժուարին և վշտառիթմէն ջանացին խրամատել սորա հիմունքն ընտանի թշնամիք, այլ կանգուն մնաց ձեր հարց այս

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Նկարագրութիւն գալուտեան եւ ասպնջականութեան խորք վանս ամենափրկչեան Նորբողոյտու բարձր աստիճան իրանէ բեղրովից Պալիստանովի պաշտօնաւարի դեպպանատան Ռուսաց Թեմիական պատեհան բերելոյ զըրանչան յօգուտափառ կայսերէն ամենայն Ռուսաց յարգու վսեմա. Զըլլ Սոպրան Արքայորդի կուսակալին Ասպանանայ: (1)

Այն ինչ արժանապատիւ տէր Դաստար տէր Սիմեոնեան վիճակաւոր քահանան թէհրանու ի 27 Մայիս թուեալ գրութեամբ իւրով որ ի սոյն ամի յայտնեաց բարձր արժաւոր խաչ խաչատուր վարդապետին Առաջնորդական փոխանորդի անունափրկչեան սրբոյ վանացս, զի գերազանց եւ պատման Ռուսաց որ ի թէհրան, բարեհաճութեամբ պատուիրեալ էր շքանշանաբեր պաշտօնատուրին իւրոյ ի հասանելն յԱսպանան իսուրբ

վանս իջնանիլ, և ահա մեծ ուրախութեամբ թե բարձր արժաւոր վարդապետն և թէ վանքական կառավարիչքն սկսան զհարկաւորեալ հանդերձանս պատրաստել. սակայն արժանաւորապէս հիւրընկալելոյ զբարձրաստիճան պաշտօնատարն այն գեազանատան, որոյ անուն կոչուր իւրանէ Բեղրովից Պալիստանով. և իբրև մերձեցաւ գալուտ նորին՝ Բ. արժաւոր խաչատուր վարդապետն յղեաց ընդ առաջ նորին զքահանայ մի և քահանայափ անձինս ի ժողովրդոց. որք և դիմաւորեալք էին նմա ի զհեաղ կոչեցեալ տեղին երկրք փարսախօք հեռի ի քաղաքէս, և զյարդանս և շնորհակալութիւնս ի դիմաց վարդապետին և հասարակութեան Չուրպուս նուիրելով նմա և փոխադարձաբար և զնորինն ընկալեալ. յայտնեալ էր և նա զի իջնուեցեղէր ի սուրբ վանս հաճութեամբ գեսպանին: Յառաջ քան զայն վսեմա. Արքայորդի կուսակալն տեղոյս ևս զքանի ի Պարսիկ իշխանաւորաց հանդերձ այրուծիովք և մեծամեծ հանդերձանօք առաքեալ էր ընդ առաջ մինչ ց'Մուրչախօս ինն փարսախաւ հեռի ի քաղաքէ ի դիմաւորութիւն կայսերական շքանշանին և բարձր Պալիստանովին, որոյ վանս և յատուկ ձեռակալք մի ևս յղեալ էր, զի նորին մուտ գործեացէ ի քաղաքս:

Ի 5 Յունիս Բ. արժաւոր վարդապետն հանդերձ հոգեւորականօք և բազմաթիւ ժողովրդովք և

ընդ առաջ ընթացաւ մինչ ի Զարբաղ արքայական ճեմերինս, ուր ի նշմարելն միմեանց՝ մեծաւ յարգանքօք ողջագուրեցան. նա ջերմեանդաբար զԱյն համբուրելով զվարդապետին, և սա զհակատն, և շնորհակալութիւնս առնելով թէ նմա և թէ ընդառաջ գնացողացն, և ապա նոյն բազմութեամբ և այլ ուղեկցօք ի Հայոց և ի Պարսից ի դրանիկ արանց հեծելոց և հետեակաց հասին ց'դուռն վանացս, յայտն ժամու պանդակք վանաց ի պատիւ շքանշանին և նորա հնչէին, և պատրուծակ մի ևս առաջնորդ ոտիցն զվանտիւր ի վանաց: Այսպէս մուտ գործեալ ի վանս ուղղակի յառաջացաւ նախ ի նր Եկեղեցին, յորում ջերմեանդաբար ծնրեալ զգլուխն և աղթեալ առ Աստուած՝ հրաւիրեցան ապա ի մեծ դահլիճ առաջնորդարանին ի պատրաստական աթոռ, ուր յայդուէ ցերեկոյ զայցելուս ընկալաւ պատուասիրաբար: Յայտն պահու եկին և իշխանաւորք Պարսիկք ի կողմանէ արքայորդոցն, բերելով ի նմանէ զանազան քաղցրաւենիս յարձաթեայ սկաւառակս վեց «Կիւմի» կոչեցեալ արձաթեայ մեծ սկաւորք և ի դիմաց նորին վսեմութեան պատուեցին զպալուստ նորին: Պատրաստեալ կայր և բուն իսկ Առաջնորդարանն զարդարանօք և զահաւորակօք վանս առանձին օթագայելոյ նորա:

Ի հետեւեալ շրեքաբարթու առաւօտունս բարձաւ Պալիստանովն և Բ. արժաւոր վարդապետն

(1) Այս անուց ծանուցած էինք Արշալուստյ միջոցաւ թի Ռուսաց վեհօփառ կայսեր մեկ պատրուիքով Չուրպուս հասած էր Ասպանանու կուսակալ Արքայորդոյ Զըլլ Սոպրանի շքանշան բերելու պատեհանքով: Ի թղ յիշեալ պատուիրակին, որ Զուրապա ամենափրկչեան վանքն իջեանցած էր, գալուտեան ճարտարութիւնը ուղարկուած է առ մեզ ի Նորբողոյտ, զոր կը փութամբ հրատարակել, թե՛ս թիջ մը ուշ նամած ըլլայ:

տունը և չկործանեցաւ զի ի վերայ հաստատուն վիճակն ամբարայէն հիմնեալ էր և ոչ ի վերայ մարդոց: Տեսէք քննեցէք և պատմեցէք մեր բացակայ եղբայրներուն թէ ինչպիսիակի մէջ է տակաւին և այսօր, ոչ աւելցած և ոչ պակասած, այս տանը առաջին վերակացուներն Գրիգոր Լուսաւորիչ, Սահակ, Մեսրոպ, Ներսէս, Մանգակունի և այլն ինչպէս որ կարգադրեցին՝ նոյն կարգադրութեամբ կ'ընթանայ ցայսօր, և մեր պատուական դրացեաց Հռովմայեցոց և Յունաց մեծ տուներուն այսինքն եկեղեցեաց մէջ դժտութիւն և հերձուած և իրենց դործածած բառերովը շատ մը անվայել բաներ պատահելէն զիրար բանադրելէն նորովէն շատ ետքը, տեսէք Շնորհալին Ներսէս վերջին գործերու մեծ վերակացուն ինչ արթնութեամբ և խոհեմութեամբ պահպանեց այս տանը կարգադրութիւնը առանց անոնց վէճերուն մէջ մաներու, յարգելով միշտ իւր մեծ դրացիները այլ պահպանելով իւր տան ինքնօրինութիւնը զոր ի Գրիգորի անտի ունէր, տեսէք և պատմեցէք թէ՛ ձեր և մեր Սրբազան հարց շնորհիւ և քարոզութեամբ և կանոնադրութեամբ Գրիգորի Աւետարանն է միայն մեր եկեղեցոյն հիմն և կանոնն, և այն ամեն կանոնք և աւանդութիւնք և վարդապետութիւնք որ չեն համարուած այսմանից զի Աստուածային կանոնաց, լին ընդունուած և չպիտի ընդունուին յաւիտեան:

Տեսէք և պատմեցէք թէ՛ զուր ձեր տան մէջ էք հիմն թէ ինչ որ այլուր իբրև շնորհ կ'ընդրեցէք, հոս իբրև ձեր իրաւունքը պիտի վայելէք ձեր հարազատ եղբայրք հետ որոնք իրենց պարտքերն անթերի կրկատարեն: Աւրախ եմ ես և ոչ միայն ես հապա բոլոր եկեղեցականք, աշխարհականք ձեր հայրերն և եղբայրներն, ցնծութեան տօն կրկատարենք ոչ միայն մեք աստ յերկրի այլև շարք ի յերկինս:

Դուք մեզի պարզ իրաւասութեան խօսք կը նէք, բայց ես ձեզ կըրեմ, թէ ես այս բանին վրայ լոկ մարմնաւոր աչօք չեմ նայիր, այլ իմ հօգիս կ'խայտայ երբ կըտեսնեմ որ կրկատարուի մեր Աստուածային վարդապետին ազօթքն և իղձք: «Հայր կամիմ զի սօքա մի իցեն որպէս և մեք մի եմք»: Յաւերժական և օրհնեալ ըլլայ այս միութիւնը: Մեր Տէրը մեզի սովորեցուց ազօթել միշտ այսպէս: «Եղիցին կամք քո՝ Աստուած կրկամի որ միանանք և սիրենք զիրեար, ինչքնեցէք և խնդրեմք որ Աստուծոյ կամքն ըլլայ: Գրիգորս մարգարաւ որ զմարդիկ միացնէ, և Աստուծոյ Հօր մէկ ընտանիք կազմէ, եթէ բոլոր մարդիկ պարտաւոր են միանալ, հապա ինչպէս չմիանան մէկ ազգի անգամներ՝

առեալ ընդ իւրեանս զբերեալ կայսերական շքանշանն արժուեղբորմ, ընդելուզեալ համակ թանկազին բուրնիսթ ախմար աղամանգեայ ի վերայ կապտապոյն ծոպի (էնթի) հանդերձեցան տանիլ առ արքայորդին ի քաղաքն: և ահա աշտանակեցան ի նծոյգս ահիսարանոցս առաքեալս յարքայորդոյն և հասին ց'զեւտեղին Չանդարուտայ ի տեղի արձակ, ուր նստան ի պատարաստական ձիակառն և սառաքեալս ի նսրին զանմափառութենէ և յուղի անկան, որոց առաջին երկուող կարգաւորութեամբ յառաջէին արքունի զօրականք, և յետուս հնծելազօրքն հետեւէին, մինչ հասին յարքանական հոյակապ պալատն Սարգիստիստն անուանեալ, ուր էր բնակութիւն արքայորդոյն: Անդ ի պատիւ շքանշանին ի հանդիսի կացեալ էին զինուորք զինուորական հանդերձանօք Պարսիկ իշխանաւորք զարդ արեալք ի պաշտօնական համազգեատու և ի զլուխ նոցին՝ նորին վանմափառութիւն արքայորդի կուսակալն Կայսրի, ախանակապ պատենաղէն սրմէն, փողփողիւն, ախանակաւ ընդելուզեալ գոհարեղինօք և կիտուած աղարդ զգեւտիւք և այլ արքայական ծոխապանծ շքեղափառութեամբք, որ և մերձեալ կայսերական շքանշանին արժանաւոր մեծարանօք զլուխ խոնարհեցոյց, և ընկալաւ ի լանջազայն ձեռամբ բարձրա Պարսիտանովին, և ահա բազասարկ ամենայն հանդիսացեալքն շնորհա-

որոց միութիւնը անհրաժեշտ է վասն երկնային և վասն երկրային կենաց: «Միութիւնը ծնող բարեաց, անմիաբանութիւն ծնող չարեաց»: Միանանք զօրանալու համար, չբաժնուինք արկարանալու համար: Ըսէք, բունք մեր բացակայ եղբայրք որ փութան գալ խառնուիլ իրենց եղբայրք հոմ բազմութեան մէջ, զի այս է իրենց տունը, այս է իրենց գաշտը, այս է իրենց բնիկ հողը, հոս ազատ օգ կ'ծծեն, հոս կ'զարգանան և կուսճանան, իրենց բնական երկիրն է այս, իրենց երկրին ջրովը կ'օռոզին և իրենց հարց Աստուածն հոս կըճօկէ իրենց վրայ իրենց տան մէջ են ըսի և գարձեալ կըրեմ: Երբ հոս գան՝ այս տան որդիքն կըլլան, և ոչ ծառաներն: Մեք այս տան վերակացու սպասաւորներն եմք, զորն իրենց եղբայրներն համահաւաքուելով կընարեն: Հոս քահանայներ կան՝ չէ թէ հեռու են եկած, այլ իրենց մէջ ծնած, սնած, իրենց մէջ ընտրուած և իրենց ընտրած Եպիսկոպոսն են ձեռնադրուած: Հոս Եպիսկոպոսներ կան որ ազգին ընտրած կաթուղիովն օժուած են: Հոս այս եկեղեցոյն առաջնորդներք, Պատրիարքներք, կաթուղիկոսներք, որոց պիտի հրնազանդինք, ազգին եկեղեցոյն ազատ կամքն ընտրուած են, և նախապէս իրենք կ'հնազանդին և հնազանդելու պարտաւոր են այն կանոններուն և օրէնքներուն որք անձանթ չեն ձեզ զոր մեր հայրերը կարգադրած են, և որոց ուսումը մասնաւորաց սեպհակաճութիւն չէ եղած մեր մէջ, և որք չեն փոխուիլ ըստ քմաց:

(Երարուակիցի)

Գահութեամբ կըլսեմք թէ մայրաքաղաքէն հայազգի ոսկերիչք ալ «Հայ-ոսկերիչաց» անուամբ ընկերակցութիւն մը կազմել են մէջերնին, ամեական Չ զարուչ բաժնեկազմով, նպատակ ունենալով ընկերութեան ծախիւքը Հայաստանի մէջ ազգային գարոյ մը բանալ ընդ մշտնջենաւոր անգլութեամբ Արեւելեան Կորոցասիրաց ընկերութեան:

Յիշեալ ընկերութեան յարգ ստորագրով ոսկերիչ հայազգի անգլամիջոց թիւր 330ի չափ հասած ընկերով, յուսալի է թէ երբ գործի սկսի ընկերութիւնը բաժանորդաց թիւը մինչև 800ի պիտի կարենայ հասնիլ:

Գովելով հանդերձ մեր հայազգի ոսկերիչաց սոյն ազգաօրհական ձեռնարկը, որոյ լիովին յաջողութիւն կ'մտալծեմք, կըհամարձակիմք ըսել որ թէպէտ Հայ ոսկերիչք ամենէն ուշ արթնացան հայկական դաստիարակութեան գործոյն և ջանից ձեռնտու և գործակից հանդիսաւոր բայց և այնպէս վստահ եմք թէ՛ անգամ մը

ւորեցին նմա զայն կայսերական պարզեւ, խոնարհեալ զըլուխ ի նշան յարգանաց: Յայսմ պահու նորին վեմամափառութիւնն ատենախօսեաց հակիրճ առ բարձրաստիճան Պարսիտանովին ցուցանելով զի Պետութիւն Ռուսաց և Պարսից իբրև եղբայր ունին զսիրոյ յարաբերութիւնս միշտ ընդմիմեանս, և բարեկամական զգացմունք նոցա յայտնի են յամենայն դէպս, յորոց սակի և արժանացուցանեն զինքն կայսերական շքանշանին էր և մի ազգացոյց, և այն մեծ դճճունակութիւնս յայտնեաց, և բարեմաղութեաց զյարասեւ և զանվկանդ հաստատութիւն երկուցուն պետութեանցն, և ս և բարեկամական յարաբերութեանց ընդ միմեանս: Յետ որոյ և պատուեալ թիւիւք, օչարախօք և քաղաքենեւօք արձակեցան ի բաց:

Յետ քանի աւուրց պարգևեաց արքայորդին բարձրա Պարսիտանովին նծոյգ մի արարոցի և աշխոյժ, ընդ նմին և հրաւիրեաց զնա և զԲարձրա վարդապետն վասն հետեւեալ աւուրն յետ միջօրէի ի պարտան իւր, որք և դարձեալ կառօք և վերայիշեալ զօրականօք գնացին ի ժամադրեալ ժամուն, և վայելելով զթէյս, զօշարակի և զբարգաւենիս և այլն, տարաւ զնոսա անձամբ ի թանգարան տեսարանաց իւրոց և եցոյց նոցա միտմի զնշանաւոր մեծագին հնութիւնս և զհազարաւիւտ իրեղէնս բերեալս անգամնօք մեծաւ խնամով իրք արժանի արքայու-

ձեան ի գործ արկանեցուն՝ ամենէն տունն մեծ և զօրաւոր մղում մը տալու և յարատեւ զօրակա մ'ըլլալու փորձը ցոյց պիտի տան մեր ազգային կրթութեան գործոյն:

—Արժանահուատ աղբիւրէ կիմանալք թէ այս օրերս Անդգիւղ մէջ ի նպատ Թուրքիոյ Հայոց Արձեւի անուն տեւրակ մը հրատարակուել է անգլիերէն, որնոր Հայոց վիճակը բարուցելու համար պարտականութիւն ստանձնող անթութեանց մինչև ցորդ գործած ազարք խափնքնադատելով կ'հեղան: Սոյն տեւրակէն քանի մ'օրինակ ալ հոս Անդգիւղ դեպքանատունը զոկուած ըլլալով, կըկարծեմք զիմանալ թէ օրինակ մ'ալ թարգմանութեան յանձնուել է Հայ լրագրաց մէջ հրատարակութեան սրտելու:

—Բուժանոց կառավարութիւնը Քեզուլէնէն գտնուող հայազգի հաստարակութեան ի ննդոյ Առաջնորդին, 2000 կանգուն պէտին մը շնորհելով լիշեալ գեանին վրայ ապագային Եկեղեցոյ և վարժարանի մը կառուցման հիմնադրութեան հանդէսը կատարուել է այս կերպով:

—Մեզ պրում են Երևանի Վանից, որ Ռեալտեիսի վիճակաւոր Առաջնորդ Գրգորան Մակար Արքեպիսկոպոսը մի ասորացութիւն է բայց արել յօգուտ «Իրարատեան» ընկերութեան և ինքը ստորագրել է 3000 բուրլ: Ասում են, որ մեծ գումար կըհաւաքուի: Մեզ այս լուր հաղորդող մի պատահական թղթակից է: Եթէ այդ լուրը ճիշդ է փառք և պիտի Յ. Մարտիկանութեան, որ Հայ ժողովրդից սաւառած փողերի մի գնեա փոքր մասը նախուժ է նոյն ժողովուրդի մանուկներէ կրթութեան գործին:

—Երկուշաբթի Հոկտ. 13ին Թիֆլիսում փախճանվեցաւ Սարգիս Արքեպիսկոպոս Հասան-Չալալեանը: Պատմում են, որ հանգուցեալ թողել է 25,000 բուրլ և կտակել է, որ այդ գումարը բանկերում շահեցնուի 125 տարի և յետոյ արվի Հայոց ուսումնարաններին: Հանգուցեալ սրբազանի տանը միայն 100 բուրլու կոյք են գտել:

ՆՆԻՔԻՆ

Կայսերական հրամանաւ մայրաքաղաքին մէջ հաշուէքնիլ Ատեան մը կազմուած է:

Սոյն Ատեանին պաշտօնն է՝ քննել այն ամեն սեղանաւորաց, վարչական և այլ բոլոր պաշտօնէից արարքը, որք ուղղակի յարաբերութիւն ունին անթութեան գանձուն հետ: և պատասխանատու են անոր: Ասկէ զառ պաշտօն ունի նաև քննելու քաղաքապետութեանց, հիւանկան մեծափառութեան: Ի նոցանէ եհան զուսանկար կենդանադիր իւր, որոյ քառակուսի շրջանակն համակ յոսկուց դրուագեալ էր գործ ճարտարարուեստ, զոր պարզեւեաց Բ. Պարսիտանովին և ասաց չունել ի թանգարանին իր թանկազին և սիրելի ինքեան քան զՊարսիկերն իւր զայն, և ի նշան մեծարանաց իւր հանձնեալ պահել առ ինքն, զոր և նա շնորհակալութեամբ առ ընկալաւ:

Ի 18 Յուլիս ի տայն զհրամարական վերջին այցելութիւն իւր Բ. Պարսիտանովին արքայորդոյն նորին վեմամափառութիւնն հանեալք մատանի իւրմէ զվեճագին աղամանակալմար զմատանին եր ի մատն Պարսիտանովին ի պարզեւ, և ծառայից նորին երկուցունց (որոց մին էր Հայ հարութիւն անուն) պարգևեաց իւր քան իւրեք երկուհարիւր թուման, Պարսից գրամ:

Յաւելումք և պայս, զի յառաջին աւուր դատեան Պարսիտանովին, մեծաւ խնամ ջոմաց զննպեան Պարսից և սառաքեաց առ ինքեանէ կողմանէ քանի արս և զքաղցրաւենիս, և շնորհաւորեաց զպարուստ նորա: Այսպիսի այցելութիւնըս ետուն և այլ աւագ անիւն և իւրոյացիք, որոց և ինքն և ս զխաւորացն և խնամ ջոմային այցելութիւնս ետ փոխադարձաբար:

Յընթացս ներկայութեան իւրոյ պատուեաց կառավարութիւն վանացս բաւ արժանոցն յամենայն դէպս զբարձր Պարսիտանովին, և ոչ մի

ատանց, խնայողական արկղե-
 ալս կարգի ամբողջ հաստատութեանց հա-
 ճանքը :

Հաշուէքննիչ Առեանքի հարկին արտօնու-
 չին պիտի ունենայ գանձային պաշտօնեանե-
 ՛ր գատեյուն : Այլ գանձային տեսչութիւնը և
 ուր չորևէ տեսչութիւն մը չպիտի կարենայ
 անձնաժողովոյ տուած վճիռներուն միջամտու-
 չին ընել : Անոր տուած վճիռները չպիտի կըր-
 ան վերաքննելի ըլլալ :

Երեք անիսն անգամ մը, Սահմանադրութե-
 ՛ն յորում անիսն հասնաւ, Առեանք գան-
 ձային վիճակին վրայով տեղեկագիր մը պիտի
 արկայացունէ Սուրբատին Ա. նախարարին միջ-
 արդարութեամբ :

Առեանին անգամոց թիւը մասնաւոր օրինա-
 յութիւնով մը պիտի որոշուի ի վերջոյ :

Սահմանադրական և երկրագործական տես-
 յութեան նախկին պաշտօնեայ, Յովհաննէս Եփ-
 րեանին նախագահ կոչուած է :

Առեանին անգամ երեք հետեւեալ անձինք,
 Վաղարշ Սարգիս Եփ. Պետական խորհրդոյ անդամ,
 Համի Արիֆ Եփէստի, նախկին տեֆէթերտար
 կրթութիւնի,
 Գատրի Պէյ, գանձային տեսչութեան նախորդ
 գնահատիչ,
 Բիֆթաթ Եփէստի,
 Էտուարց Եփէստի,
 Յովհաննէս Եփ. պետական խորհրդոյ անդամ,
 Թաճմանակեայ կերպիւ Առեանին ընդհանուր
 խառնարանի պաշտօնը կատարելու յանձնարա-
 յութեամբ,
 Յովհաննէս Եփէստի Խելուայիքոյ, շարունա-
 կելով նաև առ ժամանակեայ կերպիւ գանձա-
 յին բարենորոգութեան յանձնաժողովոյ ան-
 ցամակցութիւնը,
 Գատրի Պէյ, որ նոյնպէս յիշեալ յանձնաժո-
 լովոյ անգամակցութիւնը պիտի շարունակէ :

Նոյնպէս վերին կամեմքի անունով շրջանակ
 ի կազմուած է կայսերական հրամանաւ գան-
 ձային պաշտօնեայ թիւն մէջ :

Այս շրջանակը վնցի պիտի բաժնուի,
 Ա. Թահրիր Եփէստի,
 Բ. Թահրիր Եփէստի,
 Գ. Էրաք Եփէստի,
 Դ. Սուհասեպէ,
 Ե. Թահրիր Եփէստի,
 Զ. Գույուտը խագանի,
 Է. Թահրիր Եփէստի շրջանակ վերաբեռուէ մը և
 առանց պաշտօնեայներ պիտի ունենայ :

Այս շրջանակոյ մասնաւոր քարտասուութիւն

ները յատուկ կանոնադրութիւնով մը պիտի
 հրատարակուին :

Սոյն հաստատութեան գլխաւոր տեսուչ կոչ-
 ուած է Մուստաֆա Եփէստի :

Կայսերական այլ հրամանաւ տասանորդի և
 ուխտի տրոց համար շրջանակ մը ևս կազմուած
 է, որոյ հրամանին առկա պիտի ըլլան բոլոր այն
 պաշտօնեայք, որք տասանորդի և ուխտի տրոց
 հաւաքման տեսչութիւնն ունին վիլայեթներու,
 Սանճագներու, Գազաներու և Նահիէներու
 մէջ :

Առաջին նախարարութեան կողմանէ շրջաբե-
 րական դրութիւն մը ուղղուած է բոլոր գաւա-
 ռաց, որ խիստ կարևորութիւն ունի :

Յայտնի է ընթերցողաց որ մինչև հիմա գա-
 ռուներու կառավարիչք չէին կրնար հաղոր-
 դակցիլ ուղղակի կերպիւ զանազան պաշտօնե-
 րութեանց հետ, եթէ ոչ Մեծ-Եղարդտութե-
 միջոցաւ, և որ խիստ մեծ փրամներ կը պատա-
 հէր այս կերպով դործերն յաղաղելուն պատ-
 ճառաւ : Այժմ այս շրջաբերականը արտօնու-
 թիւն կուտայ վալիներուն, որ այսուհետև ուղ-
 ղակի հաղորդակցիլն այն պաշտօնեութեան հետ
 որոյ ձեռնհասութենէն կարեւար է խնդիրը :

Եվրոպայի պաշտօնեութեան վերաբերող վե-
 րանորոգութեան յանձնաժողովը դեռ կը շա-
 րունակէ իր խորհրդակցութիւնը : Ճեթիքի Հա-
 լաֆա կըսէ թէ, իւրաքանչիւր վիլայեթի համա-
 հաշուէքննիչ պաշտօնեայ մը պիտի կարգուի
 յանձնաժողովոյ կողմանէ, և այդ պաշտօնեան
 5000 զուրուշ ամսական մը պիտի ստանայ, օգ-
 նական մը ևս պիտի ունենայ, որ նաև պիտի
 ընդգրկուի 3000 զուրուշ ամսական : Սանճագնե-
 րու մէջ ալ այս մասին միտիւրներ պիտի կոր-
 դուին, 2000 զուրուշ ամսականով, ընդ հրամա-
 նաւ Նահանգաց պաշտօնեայներու : Իւրաքան-
 չիւր վիլայեթի մէջ յատուկ սեղանակ մը պիտի
 հաստատուի վաղ ֆի գործոց կարգադրութեանց
 համար և պարտաւոր չպիտի ըլլայ Եվրոպայի
 պաշտօնեութեան դիմելու : Հաշուէքննիչ պաշ-
 տօնեից կողմանէ հաւաքուած Եվրոպայի տուր-
 քերը իբր եկամուտ պաշտօնեութեան, առան-
 րին մէջ պիտի արձանագրուին :

— Աւստրո-հունգարիոյ վեհա. կայսրը, հոճած
 է ազամանդապարդ սակեղէն տուփ մը ընծայել
 արտաքին գործոց պաշտօնեութեան ընդհանուր
 քարտուղար Ն. Վոեմութիւն Սարգիս Եփէստիին :

— Քաղաքի լրագրի կը ճշտատուէ թէ Ելիպ-
 տական կառավարութիւնը, վիճենայի և Բարի-
 ղի քաղաքական գործակալները վերցուցէր է :

— Անգլիոյ կառավարութեան մօտերս Բարձ-
 ր և շորհա ի վերայ Հայոց :

Ի 17 Յունիս որ էր օր հրատարակուի նորին և
 վերադառնալով ի Թէհրան ի նախահաշուն սե-
 ղանակից էին քանիք յերեւելեաց Հայոց և յու-
 րոպայեաց ընդ Բ. Պախխանովին ի վանս, իբրև
 առաջարկեցան բաժակը վանս կենաց կայսեր,
 դեսպանին, և Պախխանովին ընթերցայ և ես
 զյետագայ ուղերձն շորհակալութեան չափա-
 բանեալ յինէն, զորև հաճութեամբ և գոհու-
 նակութեամբ ստացաւ, և ասաց ի Թէհրան
 թարգմանել տալոց է Բուսերէն և մատուցա-
 նելոց դեսպանին ի տես : Ի 4 ժամուն յետ մի-
 ջրեի հրամարական ուղոյն առեալ նորա ամե-
 նեցուն մեկնեցաւ ի վանսոյ կարի շորհակա-
 րութեամբ և բաւարարութեամբ սակս արժա-
 նագէս պատուելոյ զինքն յընթացս հնգետա-
 սան աւուրց ասպնականութեան իւրոյ, և ապա
 նստեալ նոցա և Բ. արժա. վարդապետին ի ձի-
 ախառան առաքելալ յարքայորդոյն ի ճանա-
 պարհ անկան, որոց առաջի զօրականք ընթա-
 նային և յետևառ հեծեալ ճանապարհորդք ի
 Հայոց և յերեւելեաց Պարսից, Հոտեալք ի քա-
 ղաքն հրախրեցան ի տուն Հաքիմաչալայի վանս
 թէյի և քաղցրաւենեաց, և անտի ելեալ գնա-
 ցին ի Գեաղ, ընթերքն ճաշեցին անգր. զոր
 պատրաստել առեալ էր արքայորդին, և զմէջ
 զիշերան բաժանեցան նա առ Թէհրան և ճա-
 նապարհորդքն ևս առ Զուղա :

Արգարև մեծ պատիւ էր վանս Հայոց տեղոյս

բագոյն Դրան վրայ բրած ճնշումը յայտնի է ա-
 մենուն : Այս ճնշումը կ'երևի թէ իր ազդեցու-
 թիւնն ունեցած է կայսերական կառավարու-
 թեան մօտ, վասնորի եթէ ստոյգ է մայրաքաղա-
 քէն հասած հեռագրի մը պարունակութիւնը,
 Բ. Դուռը հաւանած պիտի ըլլայ Սըր Լէյարտի
 քանի մը առաջարկութեանց, զորս առաջա-
 դրած է Եւրոպական միւս տերութեանց :

Ահաւասիկ Մեծին—Բրիտանիոյ դեսպանին
 առաջարկութիւնքն առ կայսերական հառաձա-
 րութիւն :

Թէ, Բ. Դուռը պէտք է անդիացիներ կար-
 դէ իրր հաւաքիլ և տեսուչ դանձ. եկամտից,
 Թէ, Պէտք է ժանտարմայի մարմին մը կազմէ
 ընդ հրամատարութեամբ անդիացի պաշտօնա-
 կալոց :

Թէ, Պէտք է անդիացի գատու որաց նախա-
 գահութեան տակ գատարաններ կազմէ :

Աւստրիոյ և իտալիոյ դեսպանք խրատած են
 Բ. Դրան, հաւանիլ այս առաջարկութեանց :
 Արմանիոյ դեսպանը դեռ պատասխան մը չէ
 տուած. իսկ Գաղղիոյ դեսպանը քսած է թէ,
 երբէք պարտաւորութիւն մը չունի անմիջական
 պատասխան մը տալու :

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Մեծին—Բրիտանիոյ կառավարութիւնը Պիր-
 մանիստի գործերով կը զբաղի այժմ, որք եր-
 թ թալով տխուր կացութիւն մը կը ստանան Շար-
 թու մէջ հասած հեռագիր մը կը ըմբռնուցանէ
 թէ, յիշեալ երկրին սահմանները գտնուող անդ-
 լիական բանակը նշանաւոր կերպիւ կը ստուա-
 րանայ :

Գապուլի մէջ կատարուած Սեպտեմբերի ջար-
 դին հեղինակաց դատին նկատմամբ լուռ կը կե-
 նայ հեռագիրը : Եագուպ խանի մեղաւորու-
 թիւնն յայտնուած բան մ'է, բայց դեռ յայտ-
 նի չէ թէ Բրիտանական կառավարութիւնն ինչ
 պատիժ պիտի սահմանէ մեղապարտ խանին :
 Հաւանական կը թուի նաև որ Եագուպ այլ ևս
 չկարենայ դահակալել, և եթէ լրագրաց ոմանց
 կարծիքն յարգեմք, պէտք է ընդունիլ որ Աֆ-
 ղանիստան պարզապէս Հնդկաստանի կայսրուհ-
 ւոյն հարկատու երկիրներէն մին պիտի ըլլայ :

Կ. Պոլսէն հասած վերջին թերթերը գոհոհ
 կը յայտնեն յիշեալ մայրաքաղաքին Միւսլիմանս
 ներք Անգլիոյ բռնած քաղաքականութեան վը-
 րոյ : Կըզրեն նոյնպէս յիշեալ թերթերը թէ
 կառավարութիւնը վերջին աստիճան փոյթ կը
 ցցունէ ժամանակ յունական ինդոյն լուծման
 Զարին դահածառանդ իշխանը Պերլին հաս-

անգամ նախահաշուն և ընթերցան միշտ բնու-
 րապական անործակցոց յամենայն տուր քար-
 ղարեալ կայր համար ամ կերակրեցին, և
 քաղցրաւենեօք և մրցօք կային, և ի պատիւ
 նորին հրախրեալ լինէին ի սեղանակցութիւն ի
 մէն մի աւուրս յիւրաքանչիւր յերեւելեաց Զու-
 ղու և յերոպայեաց փոփոխակի : Բաց հայոց
 հրախրեցաւ նա վանս կերակրոց ի առևն իւր-
 անց ի գերա. Պ. Ստեփաննոս Պ. Աղանուրեան
 ի թիտանական գործակատարէն ի գերա. Խաչէ
 ի սու. Պ. վաճառականապետէն ի միսար Գրիորիս
 Անգլիացոյն : Ի գերա. Հաքիմաչալայ արքայ-
 որդոյն որ և է տեսուչ Զուղայուս և ի յարգոյ-
 պատիւ Պ. Միկոյէ Յովհաննէս խանին գարու-
 ղային Զուղայուս և այլն :

Ի 10 Յունիս յաւուր կիրակէի ըստ հրաւի-
 րանց Բ. արժա. վարդապետին ներկայացան
 ամենայն հոգևորականք և ժողովրդականք Զու-
 ղայուս յեկեղեցի սրբոյ վանաց, ուր նորին ար-
 ձանաւորատուութիւն մատոյց զուրք Պատարադ
 զինի սրոյ և ամենայն հոգևորականք շորջա-
 ռաղքեպետեայ կատարեցին զկարգ աղօթից և
 զհարանանական մաղթանաց առ Աստուած, սակս
 աղօթելոյ զմանկագին և պատուական կեանս
 օղտատարու կայսեր ամենայն Թուսաց Աղէք-
 սանդրի Բ. ի մահառ ի զաւաճանութենէ թըշ-
 նամոյն, նոյն Բ. Պախխանովին և ներկայ էր
 հանց խան և մեծագէտ գոհ եղև վանս այնր, և
 ասաց թէ վն հափառ. կայսրն ևս ունի զմեծ սէր

և շորհա ի վերայ Հայոց :

Ի 17 Յունիս որ էր օր հրատարակուի նորին և
 վերադառնալով ի Թէհրան ի նախահաշուն սե-
 ղանակից էին քանիք յերեւելեաց Հայոց և յու-
 րոպայեաց ընդ Բ. Պախխանովին ի վանս, իբրև
 առաջարկեցան բաժակը վանս կենաց կայսեր,
 դեսպանին, և Պախխանովին ընթերցայ և ես
 զյետագայ ուղերձն շորհակալութեան չափա-
 բանեալ յինէն, զորև հաճութեամբ և գոհու-
 նակութեամբ ստացաւ, և ասաց ի Թէհրան
 թարգմանել տալոց է Բուսերէն և մատուցա-
 նելոց դեսպանին ի տես : Ի 4 ժամուն յետ մի-
 ջրեի հրամարական ուղոյն առեալ նորա ամե-
 նեցուն մեկնեցաւ ի վանսոյ կարի շորհակա-
 րութեամբ և բաւարարութեամբ սակս արժա-
 նագէս պատուելոյ զինքն յընթացս հնգետա-
 սան աւուրց ասպնականութեան իւրոյ, և ապա
 նստեալ նոցա և Բ. արժա. վարդապետին ի ձի-
 ախառան առաքելալ յարքայորդոյն ի ճանա-
 պարհ անկան, որոց առաջի զօրականք ընթա-
 նային և յետևառ հեծեալ ճանապարհորդք ի
 Հայոց և յերեւելեաց Պարսից, Հոտեալք ի քա-
 ղաքն հրախրեցան ի տուն Հաքիմաչալայի վանս
 թէյի և քաղցրաւենեաց, և անտի ելեալ գնա-
 ցին ի Գեաղ, ընթերքն ճաշեցին անգր. զոր
 պատրաստել առեալ էր արքայորդին, և զմէջ
 զիշերան բաժանեցան նա առ Թէհրան և ճա-
 նապարհորդքն ևս առ Զուղա :

Արգարև մեծ պատիւ էր վանս Հայոց տեղոյս

նորին հիւրընկալութիւն ի վանս. որոյ օգուտ և
 ի ժամանակին վայելելոց է ազգս : Գերազանց
 դեսպանն երկու գրութիւնս գրեալ էր և առա-
 քեալ ձեռամբ Բ. Պատխխանովին, մինն առ Բ.
 արժա. վարդապետն, որով յայտնեալ էր զսէր
 իւր և զշորհս տերութեան իւրեանց ի վերայ
 ազգիս, նա և զմաստ գրութեան իւրոյ առ
 արքայորդին, և միւս ևս նոյն գրութիւն առ
 արքայորդին, որով ժանուցանելով զառաքունն
 կայսերական շքանշանին միջնորդեալ էր հան-
 գիտ պահպանել զհայս Ասպահանայ և զիւղո-
 բից : Ընկալեալ արքայորդոյն զայն գրութի
 խոտացաւ զհարկաւորեալ ինամանութիւն իւր
 և զշորհս ունել առ նոսա և չթողուլ կրել նե-
 ղութիւն ինչ յուստեքէ : Ի վերադարձին արժ-
 Խաչ. Խաչատուր վարդապետն գրութիւն մի ևս
 գրեաց ձեռամբ նորին առ դերազանց դեսպանն,
 հնգետասան յօդուածովք, որք վերաբերէին և
 այլ կարևոր ազդօգուտ խնդրոց Զուղայեցոց
 և զիւղականաց, յուսամք թէ արդիւնաւորե-
 ցին այնոքիկ շորհիւ դեսպանին : Բ. Պախխա-
 նովին պարգևեաց աստ զտասն թումանո կուսա-
 նաց Անապատին. և երեսուն թումանս աղքա-
 տաց արկեղն տեղոյս :

Ի 20 զուլ, 14 Սեպտ. 1879 :

Աւետիք Կ. Մ. Զօհրապետանց
 ասանադպիք ամենաիրկիչեան սրբոյ վանաց

նելով մեծաւ սիրով բնդունելութիւն գտած է
Բրուսիոյ կայսեր կոպուսէ :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Տեղւոյս կրօնական ժողովոյ կողմանէ հետեւեալ գրութիւնը ուղղուած է առ մեզ ի հրատարակութիւն, որ անցեալ թուով մեր Նազիւլիէն հրատարակած նամակը կը հերքէ : Աւելորդ է ըսել թէ պատկառելի կրօնական ժողովոյ կողմէ պիտի ըլլայ անկեղծութիւնը, ուստի կը զգուշացնենք մեր թղթակիցները որ միշտ ճշմարտութիւնը յարգելով գրեն : Գալով կրօնափոխութեան խնդրոյն, կը խորատեմք, իբր ազգային թերթ, Նազիւլիէի Հայ ժողովուրդը, որ եթէ դժբաղդարար այդպիսի միտում մը ունեցած է, իսպառ մոռնայ և իրեն զրկուած հոգեւոր հովուաց հովանւոյն տակ ջանահար լինի ազգութեան, կրօնի և եկեղեցւոյ յարգն ու պատիւն անարատ պահել : Սիրեմք և հետեւիմք միշտ մեր նախահարց ընթացքին և աւանդութեանց, զորս կըստանամք մեր հոգեւոր հարց շնորհիւ : անվթար պահեմք մեր բազմադարեայ ազգութիւնն ու փրկարար կրօնքը առ որ կը վերադառնան արդէն անոր գիրկէն հեռացող զաւակունք :

... Խմբագիր Արշալույս :

Ի սէր արդարութեան կը խնդրեմ հրատարակել հետեւեալն :

Ձեր պատուական լրագրի 1130 համարին մէջ Համբարձում Թ. կարապետեան մի նամակ հրատարակած է Նազիւլիէն գրուած ի 13 Հոկտ. ուրով կերպիւ իւր կ'ախարատանէ գաւառիս կրօնական ժողովը, իբր թէ անտարբեր գտնուած է տեղւոյն քահանայի մասին : Ուստի կրօնական ժողովոյ հրամանաւ հարկ կը համարիմ այս մասին եղած բոլոր իրողութեանց համառօտութիւնն յառաջ բերել այստեղ կրօնական ժողովոյ արձանագրութիւններէն քաղելով, որպէս զի թէ պատասխան լինի այս՝ Մեծ. կարապետեանին և թէ նորա հրատարակութեանն յառաջ եկած գայթակղութիւնն վերնան :

Նազիւլիէի եկեղեցւոյն վրայ ձեռնադրուած Տ. Մկրտիչ քահանայն, Օգոստոսի մէջ թողուով իւր ժողովուրդը քաղաքս կը գիմէ, և մինչ կըստառուիր իրեն որ փութով վերադառնայ ի Նազիւլի, նա պատրուակ բռնելով իւր նիւթական վիճակն, Հուլիս վերադառնալ, կրօնական ժողովն քահանայն նիստեր կազմելով այս մասին և տեսնելով թէ Տ. Մկրտիչն յամուռեալ կը մնայ և Հուլիս երթալ, (թէ և նիւթական վիճակին կողմէն ամեն ապահովութիւն կը տրուի իրեն), Քահանայագործութենէ կը դադարեցնէ, և ցաւ ի սիրտ լսելով թէ նիւթեցեալ մը պատահած է և քանի մը հոգեւոր պետքեր կան մատակարարուելու ի Նազիւլի, իսկոյն կը հեռագրէ Սեօքէի Տ. Յովհաննէս քահանային որ երթայ ի Նազիւլ :

Ի Նորին Արժանապատուութիւնն ևս անմիջապէս կ'ուղեւորի ի Նազիւլի, և կը կատարէ ինչ որ պէտք է : կրօնական ժողովն այսու ևս բաւական չլինելով երկիցս կը գրէ ի Պոլիս առ գերա. Պատրիարքական փոխանորդն և առ ամեն Ս. Պատրիարքն, որպէսզի բարեհաճին փութով ջրահանայ զրկել մին Այսթընի և միւսն Նազիւլիի համար, ինչպէս որ եկան յիշեալ քահանայքն և արդէն բաւական ժամանակ է որ գնացած են իրենց պաշտօնատեղիներն :

Այս յայտնի իրողութենէ պարզապէս կ'երեւի որ կրօնական ժողովն ընաւ երբէք անտարբեր գտնուած չէ Նազիւլիի ժողովրդեան նկատմամբ այլ ընդհակառակն խիստ մեծ ուշադրութեան առած է նոյա քահանայի խնդիրն և հանգամանորէն տեղեկագրած է նաև առ կրօնական ժողովն կեդրոնական վարչութեան :

Չարմանալի է ուրեմն կարդալ մեծա. կարապետեանին նամակին մէջ թէ Ազգային վարչութիւնն անտարբեր մնացած է Նազիւլիի նկատմամբ, մինչդեռ ինքն իզմիր գտնուած ժամանակ ակնատես և ականջաւոր եղած է թէ Ս. Առաջնորդի և թէ կրօնական ժողովոյ ամեն ջանքերուն ի պատիւ և ի միջնորդութիւն Նազիւլիի բարեպաշտ ժողովրդեան :

Եւս առաւել զարմանալի է կարդալ յիշեալ նամակին մէջ թէ ժողովրդէն ոմանք Այսթընի Մխիթարեան միաբանութեան զիմելու և ոմանք Ա. Երեմի միջոցաւ պատուելիներ հրաւիրելու համար ստորագրութիւնք բացած են : Տարակոյս չկայ, որ Պ. կարապետեանին նամակն այն տեսակ գրութիւններէն է, որոնք սխալ մը քայլեցնելու համար քանի մը սխալներ և չափազանցութիւններ ևս կը բարդեն : Քանզի մենք չենք հաւատար որ Նազիւլիի մեր սիրելի ժողովուրդն այնչափ թեթեւամիտ և խաբուտ լինին վայկական դաւանութեան մէջ, որ մի քահանայի հրատարման պատճառաւ կրօնափոխութեան գիմեն, մանաւանդ այն ժամանակ երբ կրօնական ժողովն ժող երկու ամսուան մէջ հրատարուածին տեղ երկու քահանայ զրկած է իրենց հոգեւոր պիտոյից մատակարարութեան :

Սոյն պարագաներն յառաջ բերելն զիսի հարկ կը համարեմք յաւելուլ նաև թէ Տ. Մկրտիչ քահանայն զղջալով իւր արարմանց վրայ աղերսագիր մատուցած է վերտին ի Նազիւլի երթալու և իւր քահանայական պաշտօնն շարունակելու, որուն մասին ևս գրուած է արդէն ի Նազիւլի :

Ընդունեցէք խմբագիր յարգանացս հաւատարմ :

Որով մնամ աղօթարար

Արեւադէր կրօնական ժողովոյ գաւառիս
Յովհաննէս քահանայ Միմասեան
Իզմիր, 19 Նոյեմբերի 1879 :

Երկու շաբթի աւուր հեղեղանման անձրևները մեծ յորդուութիւններ պատճառեցին բոլոր այն առուակաց և գետոց մէջ, որք Մանիսայի բարձունքներէն կ'իջնան : Տէյրիմէն Չայը ըսուած գետին վրայի կամուրջը մնասուեցաւ նոյն գետին յորդուութենէն : Նոյն օրուան Մանիսայէն հասնող երկաթուղւոյ կառուածքը յիշեալ կամուրջին ճեղքուածէն վառ կը բռնուի, և սոյն տիւր արկածին մեծ վնասներ կը պատճառուի : Պարտապատ աւանէն երկու յոյն տեղապահներ գործով դէպի Ալաշէհլի կողմերը գալով առ տեղի կ'ունենայ : Պարտապատ աւանէն երկու յոյն տեղապահներ վրանին կրած ամբողջ ստակին կողպտուելէ ետև : Քոչուառ ճամբորդներուն դիակները, որ սպանուելէն քանի մը օր ետք կը գտնուին, ստակալի կերպիւ եղծուած և անդամատուած էին : Ալաշէհլի կը փոխադրուին դիակներ և անդ կը թաղուին :

տին յորդուութենէն : Նոյն օրուան Մանիսայէն հասնող երկաթուղւոյ կառուածքը յիշեալ կամուրջին ճեղքուածէն վառ կը բռնուի, և սոյն տիւր արկածին մեծ վնասներ կը պատճառուի : Պարտապատ աւանէն երկու յոյն տեղապահներ գործով դէպի Ալաշէհլի կողմերը գալով առ տեղի կ'ունենայ : Պարտապատ աւանէն երկու յոյն տեղապահներ վրանին կրած ամբողջ ստակին կողպտուելէ ետև : Քոչուառ ճամբորդներուն դիակները, որ սպանուելէն քանի մը օր ետք կը գտնուին, ստակալի կերպիւ եղծուած և անդամատուած էին : Ալաշէհլի կը փոխադրուին դիակներ և անդ կը թաղուին :

— Չորեքշաբթի օր ծովապետ Իպրահիմ հրամանատարութեան տակ գտնուող Աւստրիոյ միջերկրական նաւատորմից մեր նաւահանգիստը հասաւ : Սոյն նաւատորմից հետեւեալ նաւերէ կը բաղկանայ, Հադադ-ըլլի զրահաւոր փրկարար, հրամանատար Ռեօտիմէր, Պաշու գործէթ, հրամանատար Շիբուտէր, Չիլի գործէթ, հրամանատար Գոլթէ, Ալաշէհլի թեղանոթակիր, հրամանատար Բալէզ, կըսուի թէ 20 օրի չափ Ձիււնիոյ ծայր կենալէ ետև, Հոռոյս և անտի Սուտա (Յունաստան) պիտի մեկնին : Յունկար Գին Ալաշէհլի զատ, նաւատորմիցը Ռոլա պիտի վերագառնայ մինչև ցնոր հրաման :

— Հինգշաբթի գիշեր Ամալը Ալթը ըսուած հրէից թաղին մէջ հրեհ պատահելով, 3 տուն հրոյ ճարակ եղան, որոց մին հրէից երիտասարդութեան ժողովատեղի եղած էր :

— Մ. Գանթ ալ Գրէնվիլ, որ քանի մը ասեան է վեր Աւստրիոյ—Հունգարական կառավարութեան փոխ—հեւապատու կոչուած էր քաղաքս, սկսած է իր պաշտօնին :

— Պ. Արամ Մարկոսեան նահանգիս ճարտարապետ կոչուած և իր պաշտօնին գլուխն անցած է : Յիշեալ պարտը Գաղղիա ուսած է իր արուեստը :

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

Աֆիօն.— Հրապարակն ի հանդարտութեան գտանի. երկուց շաբաթուց մէջ վաճառեցան 130 կողովի շափ ի գին 147—150 զրուշի չէքին

Տէր լրագրոյս,
Գ. Լուս Գ. Պալաշալեան :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱՆՈՅՍԻ ԱՐԱՐԱՏԵՍԻՆ

ՈՒՂԵՐԶ ԵՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Առ բարձրաստիճան իւանէ Բեդրովիչ Պախիտանով պաշտօնատար դեսպանատան Ռուսաց որ ի դրան Պարսից ի Թեհրան յաղագս շնորհաբեր ասպնչակառուբեան ի վասն ամենափրկչեան Նորջուղայոս, պատեհաւ բերելոյն զարժուեղորով շքանշանն յօգոստափառ կայսերէն ամենայն Ռուսաց վասն վսեմափառ Ջըլսույքան արքայորդի կուսակալին Ասպահանու :

Ի Զուղա, 17 Յունիս 1879

- Առէք զխանդս Պախիտանէ սրտից զեզմանց գօհալութեանց,
- Չոր ձեզ յաւէտ յուղերձ ձօնեն յոյրք Աղբիս Հայկական :
- Ձի բարձրութիւն ձեր գերազնիւ շուք եւ ինքեան գերապանծ,
- Շնորհածութեամբ յազգային տունս ի վանքս սուրբ Փրկչական :
- Այս փանք մեզ այս ծայրայեղց և շուք գրեմք մեծ շնորհաց
- Ծաւալ զմեք յԱղէքսանդր մեծ ինքնակալէն Ռուսիոյ :
- Որոյ աչք վեհ ի հիւսիսոյ դիտեաց բւեռց և յառեաց
- Քրիստոնէիցս ի Հայ կաճառ և շարկածեաց շարկածոյ :
- Քանզի հիւրս զանձրե տեղայ ողորմութեան յԱյրարատ,
- Ի հայրենին մեր Հայաստան և յԱղբիս համակ Արամեան :
- Ի հովանի յողթ ասպարին պատսպարէ գլխառատ,
- Գրգէ զնոսին, տածէ զերդ հօտս ի Տիրական իւր մական :
- Այնու հանգիստ ի բաղդ անդորր վիճակեալ մեր հայրենեաց
- Չերժ ի գամիռանց շար վիրադաց դիւրեն զկեանս և զբառս,
- Նոյնպէս շնորհ ճառագայթեալ այսր ի խումբ մեր Հայազանց
- Չմարդասէր տալ վայելել զողորմութիւն իւր ևս աստ :
- Չոր անխնայ կաշնուք շնորհիւ իւր գեեսպանին գերազանց
- Պաշտպանականն փարեալ զգլխովքս Այն հակող խնամածու :
- Եւ նորին իսկ գործակալքը ըզսէրն ջամբեմք գերապանծ,

Յանդորր հանիք և տաւաղիմք ընդ զօրութեամբն ընդ աղբու :
Որպէս ահա շնորհածեալ յայս տուն աղբիս և տաճար
Ո՛ գերաշուք բաշտօնատարդ գեեսպանական մեծութեան
Նոյն ապացոյց ետուք շնորհացն նորին առ Աղբիս Հայորեար :
Եւ փառք համբուն առ այլ ազանց, որով պանծամք մեք համայն :
Ուստի զարգիս այսրէն մաղթեմք առ գերաբուն Ենօլայն,
Ձկնքսանդրէ վեժ ինքնակալն Ռուսիոյ մեծազօր :
Ընդ հովանեաւ քաղցր խնամոցն ունել յաւէտ անասան,
Եւ զպետութիւն յայթ աննկուն աւնել ընդ դարս ընդհանուր :
Յորմէ շանթից շառափնաթափ վարատեցին թշնամիք,
Յաճ և ոսկոււմն գրաւեցին փազանքը նոյնն քանասար,
Եւ ի գահէն փառաց նշոյլք հատցին շնորհաց սիրանիք,
Յերջանիկ կեանս հպատակացն և ի հանգիստ բերկրարար :
Եւ գերազանց Ձինիվեայն գեեսպանին կեանք մեծութեան
Պատարքեցին յանիւս ամաց, ժամանակաց ընդ ձիգ դար,
Ի նսիհ բարօր գերեթղանիլ յու գերակայ աստիճան :
Ոյր սէր գլխոս ծաւալեցին յԱղբ մեր համուռ հայորեար :
Որ և նորուն սիրեցեալոյդ Պախտոնէի յարգ և բարձ'
Առաւելցին և բարձրացին ի վեժ պաշտօնը ի մեծ շուք,
Եւ նիշք սիրոյդ յար ցոլացին ի մեզ յաւէտ դարձադարձ'
Ում շնորհապարտ սեռն երախտեք զանձինքս մեր գրեցուք :
Աղէ յակնարկ ի բարեհաճ առէք զերդոյս զիմ այս ձօն,
Չոր ի նշան սիրոյ Աղբիս իւր ըզպակ գաբնիդեայ'
Ոլլեցի ձեզ ի յուղերձ շուք ճակատուդ գերզգօն :
Անթառամիւք ծաղկազարդեալ փունջ կապեցի մշտակայ :

Աւետիք Կ. Մ. Չօհրապետանց
Ասեանաղ պիւր ամենափրկչեան սրբոյ վանաց :